



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

« 18 » հուլիսի 2014 թ.

N 148/Մ

Հ Ր Ա Մ Ա Ն

Ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի բանավոր փուլի առարկայական հարցաշարերը հաստատելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 19-ի N167-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետին համապատասխան՝

հրամայում եմ.

1. Հաստատել ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի բանավոր փուլի առարկայական հարցաշարերը՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գրիգորյանին՝ հարցաշարերը տեղադրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայքէջում:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության <<Լուսարար>> պաշտոնաթերթի խմբագիր Ս. Խաչատրյանին՝ հարցաշարերը տպագրել պաշտոնաթերթի առաջիկա համարում:



Ս. ԱՍՐՅԱՆ